

տալ, վասն զի առաջինը ճամբան կորսուած էր. իսկ Alingio Collegiumի համար 150 սկուտ չվճարուի, մինչեւ որ Fr. Italus հոն երթայ լատիններէն դաս տալու:

1637 388.7 (14 Նոյ.): Գահերէցը կը ծանուցանէ Կ.Պոլսոյ Հայոց Զաքարիա Պատրիարքը ղրկած է Տ. Թովհաննէս Մոլինի հայ կաթողիկէ քահանայն Ուրբ. Ը. Ս. Քահանայապետին, որպէս զի յանուն անոր դաւանութիւն տայ եւ խնդրէ հայ Աստուածաշունչն, որ ընտրիոսի եւ Արկադիոսի օրով թարգմանուած է, քննուի, սրբագրուի եւ տպուի ի պէտս Հայոց, որ անոր իշխանութեան տակ են, կը խնդրէ նաեւ որ Թովհ. Մոլինի կաթողիկէ հայ քահանային որդին Միքայէլ Հռոմ Collegioի մէջ առնուի: Ս. Քահանայապետն հրամայեց՝ որ քանի մը Կարդինալներու առջեւ յանուն Զաքարիայի տուած դաւանութիւնն առնուի, իսկ միւս խնդրոց մասին Ս. Ժողովն խնամ տանի:

1639 338.28 (19 Օգ.): Կը կարդացուի Պոլսոյ հայ Պատրիարք Զաքարիայի նամակը, որ կը խնդրէ չին եւ Նոր Աստուածաշունչի հայ տպագրութիւնը փութացուի: Ս. Ժողովն կ'որոշէ՝ որ Նոր Կտակարանի տպագրութիւնն շուտով սկսի նորաձոյլ տառերով:

---

Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցւոյն մեծ գրքին մէջ, որ 1617էն Բարթողիմէոս Աբգար